ՈՐՈՏՆԱԲԵՐԴ-ՈՐՈՏՆԱՎԱՆՔ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԱՐԱ ՁԱՐՅԱՆ

Սյունիքի պաշտպանական համակարգերի թվում կարևոր և հետաքրքրական տեղ են զբաղեցնում բերդ-դղյակ ու վանք-ամրոց երկկենտրոն պաշտպանական համակարգերը։ Միջնադարյան Հայաստանում շատ վանքեր հաստատվել են խոշոր բերդերի պաշտպանական տեսադաշտերում և կառուցվել այն նույն սկզբունքներին համապատասխան, որոնցով կառուցվում և տեղադրվում էին բերդերն ու ամրոցները։ Պաշտպանական և պաշտամունքային կառույցների զուգակցումը հետագայում լայն տարածում է գտնում Սյունիքում[1]։

Երկկենտրոն պաշտպանական համակարգերը բաղկացած են գլխավոր տարրից՝ բերդից և հրկրորդական տարրից՝ վանքից։ Յուրաքանչյուր տարր մի ինքնուրույն, կազմավորված միավոր է, սակայն ռազմաստրատեգիական նկատառումներով հանդես է գալիս որպես միասնական, երկկենտրոն համակարգի մաս։ Ի տարբերություն երկկենտրոն պաշտպանական համակարգերի, միակենտրոն համակարգերն ունեն մեկ գլխավոր ռազմականացված կենտրոն, որի շուրջ տարածված են պաշտպանական տարբեր նշանակություն ունեցող միավորները որպես լրացուցիչ, ամրողջականացնող տարրեր։ Այս համակարգերում գլխավոր կենտրոններն իրենց տեղադրության սկզբունքներով, նշանակությամբ ու գրաված դիրքով տարբերվում են այդ համակարգի մաս կազմող մյուս պաշտպանական միավորներից։ Սյունիքում այս տիպի պաշտպանական համակարգերի լավագույն օրինակներից են Ցամաքաբերդի և Բաղաբերդի միակենտրոն համակարգերը։ Առաջինը ընդգրկում էր Սյունիքի Գեղարքունի գավառի, Սևանի ավազանի ընդարձակ շրջանը։ Այս տարածքը հայտնի է իր կիկլոպյան ամրոցներով, որոնք հնագիտական տարբեր շերտեր ունեն (ընդորում, ամրոցների մի մասը գործել է նաև միջնադարում)։ Համակարգի գլխավոր կենտրոնը Ցամաքաբերդն էր, իսկ Բերդկունք, Վերին Կզնուտ, Ալբերդ, Արծվանիստ և այլ բերդերը՝ Սևանա լճի ափամերձ շրջանի միավորները։ Բաղաբերդի համակարգը գտնվում էր Զորք և Բաղք գավառներում և կոչված էր պաշտպանելու Սյունիքի մայրաքաղաք Կապանը։ Այն կազմված էր տարբեր ուղղություններով դեպի Կապան մտնող ճանապարհների երկայնքով տեղադրված պաշտպանական հենակետերից։ Գլխավոր կենտրոնը Բաղաբերդն էր, իսկ Շլորուտ, Զեվու, Գեղի, Կկոցքար, Աչաղվա, Գանձաբերդ և այլ բերդեր՝ նրա մասը կազմող տարրերը։ Այս երկու պաշտպանական համակարգերը կազմել են Սյունիքի ռազմաստրատեգիական ընդարձակ ծրագրի բաղկացուցիչ մասը և այլ համակարգերի հետ մեկտեղ անառիկ են դարձրել նահանգի վարչատնտեսական այս կամ այն կարևոր կենտրոններն ու սահմանային շրջանները։

Առանձին հետաքրքրություն ունեն Սյունիքում կառուցված մի շարք երկկենտրոն պաշտպանական՝ համակարգեր՝ Որոտնաբերդ-Որոտնավանք (Եղեգիս), Բաղաբերդ-Վահանավանք (Կապան)[2], Երնշակ-սբ. Գևորգի վանք (Երնշակ), Պռոշաբերդ-Սպիտակավոր (Բոլորաբերդ)[3]։ Որոտնաբերդ-Որոտնավանք համակարգը (նկ. 1) նպատակ է ունեցել պաշտպանելու այնպիսի վարչատնտեսական կարևոր կենտրոն, ինչպիսին էր Շաղատ «գյուղաքաղաքը»[4]։ Շաղատը գտնվում էր Սյունիքի Նղուկք գավառի կենտրոնում և, ըստ Ստ. Օրբելյանի, մինչև IX դ. սկիզբը եղել է «իշխանանիստ»[5] «բերդագյուղ»[6]։ Մինչ օրս պահպանվում են ավանը շրջապատող բեր-

---

1 Ստ. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 200, Մ. Մ. Հասրաթյան, Սյունիքի 17—18-րդ դարերի ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1973, էջ 118։

2 IX—X դդ., երբ Բաղաց (Կապանի) թագավորության մայրաքաղաքը եղել է Կապանը, Բաղաբերդը մաս է կազմել միակենտրոն պաշտպանական համակարգի։

3 Փակագծերում նշված են պաշտպանական համակարգերի մոտ գտնվող բնակավայրերը։

4 Ստ. Օրբելեան, Պատմութիւն Նահանգին Սիսական, հ. Ա, Թիֆլիս, 1910, էջ 75։

5 Նույն տեղում, էջ 82։

6 Նույն տեղում, էջ 202, Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1983, էջ 326։

դապարիսպների մնացորդները։ Շաղատի մոտով էին անցնում առևտրական երկու ճանապարհ. մեկը գնում էր դեպի Վայոց ձոր և Այրարատ, իսկ մյուսը՝ Նախիջևան և Վասպուրական։ IV դ. սկզբից մինչև IX դ. սկիզբը Շաղատը եղել է եպիսկոպոսանիստ։ Ըստ Ստ. Օրբելյանի, Շաղատում է գտնվել սբ. Ստեփանոս Նախավկայի եկեղեցին, որը եղել է Սյունյաց աշխարհի մայր եկեղեցին։ Պատմիչը տալիս է եկեղեցու մանրամասն նկարագրությունը, որի համաձայն այն Հայաստանի հնաղույն գմբեթավոր կառույցներից մեկն է[7]։ Այսպիսով ակնհայտ է դառնում հո-



Նկ. 1. Որոտնաբերդ. ամրոցի ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից։

գևոր և վարչական կարևոր կենտրոնի պաշտպանության անհրաժեշտությունը։ Հետագայում այն շատ հստակ մշակված իրագործվեց պաշտպանական լայնատարած համակարգում։ Շաղատ մայրաքաղաքի պաշտպանական համակարգը կազմավորվել է դեռևս սասանյանների շրջանում (226 թ. մ. թ. ա.—652 թ. մ. թ.)։ Այն բաղկացած էր մի շարք բերդերից կազմված սլաքաձև աղեղից, որն իր մեջ էր առնում Շաղատը և հզոր պատնեշ ստեղծում սասանյան տիրակալների հարձակումների դեմ։ Պաշտպանական այս համակարգը բաղկացած էր Որոտնաբերդ, Բաղաբերդ, Կաքավաբերդ (Արևիք գավառ), Երնջակ ու Ճահուկ կենտրոնական բերդերից և, հետագայում կառուցված, նույն աղեղը եզրափակող մեկ տասնյակի հասնող տարբեր նշանակություն ունեցող այլ բերդերից[8] (դծ. 1)։ Ս. Երեմյանի կազմած քարտեզների համաձայն[9] այս համակարգի կենտրոնական բերդերը կառուցվել են հետևյալ ժամանակահատվածներում. Բաղաբերդ՝ 298—385 թթ., Երնջակ. Ճահուկ՝ 450—509 թթ.։ Բերդերի այս հզոր պատնեշը եզրափակում էր Սյունիքի հարավ-արևմտյան ամբողջ սահմանը, որը հարակից էր Վասպուրականին և Այրարատին։ Չնայած այս բերդերը հիմնադրվել են հնագույն ժամանակներում որպես ռեգիոնալ ռազմական հենակետեր, սակայն Սյունիքի թագավորության շրջանում (987—1170 թթ.) դրանք ստանում են նոր իմաստ և այլ բերդերի հետ կազմում երկրի պաշտպանական ընդարձակ համակարգի մի օղակը։

Երկկենտրոն պաշտպանական համակարգերի վանքային համալիրների մեջ առավել հետաքրքրքրականը Որոտնավանքն է։ Այն գտնվում էր Սյունիքի Ծղուկք գավառի հարավ-արևելյան մասում՝ Վաղաբին (այժմ՝ Վաղուդի) գյուղից հարավ-արևելք։ Որոտնավանքը կառուցվել է ամրոցաշինական սկզբունքներով։ Հետաքրքրական է տեղանքի ընտրությունը, եկեղեցական բոլոր շենքերի դիրքորոշումը և վանքապատկան տարածքի պարսպապատումը՝ նախապես մտածված և

---

7 «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 8, Երևան, 1982, էջ 651։

8 Սուրմալիկ, Նահաջիր, Յղնա (Նախճավան գավառ), Շահապոնք (Ջահուկ գավառ), Շաղկերտ, Քյոլք, Գաղ (Երնջակ գավառ), Խոտուք, Աղխիտու, Սյունի, Դաստակերտ (Ծղուկք գավառ)։

9 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 2, Երևան, 1984, քարտեզներ։

շատ հմտորեն իրականացված։ Համալիրը տեղադրված է Որոտան գետի զառիվայր կիրճերով շրջապատված բնական սարառոտի վրա, որը նեղ լեզվակով միանում է լեռնալանջին[10]։ Լեզվակ կազմող հատվածում տեղադրված են վանքային հանալիրի աշխարհիկ կառույցները։ Համալիրը ձգվում է արևելքից արևմուտք և աշխարհիկ կառույցների հետ կազմում ներքին բակ, որտեղ գե-

Գծ. 1. Շաղատ մայրաքաղաքի պաշտպանական համակարգը։

բեզմանոցն է։ Վանքը հյուսիսից պաշտպանված է փոքր բլրակի միջոցով, հարավից անձնգախոր կիրճն է, իսկ արևմուտքում և արևելքում անտառապատ, զառիվայր լանջերն են։ Համալիրի բոլոր

10 Որոտնավանքի տեղադրության մասին կա հետևյալ նկարագրությունը. «Որոտնա վանքը տեղավորված է մի բարձրագիր բլրակի վրա, որի հարավային կողմի ձորի միջով արագ գնում է համանուն գետը, որ մի քիչ առաջ Ուզ գյուղի մոտերքում Բազարչայ անուն էր կրում» (տե՛ս Մ. Փ ա փ ա զ յ ա ն, Հնութիւնք վաղօրեայ, Վաղարշապատ, 1889—1890, էջ 317—318)։

շենքերը, կարծես, ընդգրկվել են պաշտպանական համակարգի մեջ, քանի որ կազմում են հյուսիսային պարսպապատի շարունակությունը։ Հենց սրանով է բացատրվում այն հանգամանքը, որ եկեղեցական բոլոր շինությունները հյուսիսային կողմից չունեն բացվածքներ (գծ. 2)։ Այս կողմում է տեղադրված համալիրի միակ մուտքը [գծ. 2 (12)]։



Գծ. 2. Որոտնավանք. համալիրի ընդհանուր հատակագիծը. 1. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, 2. սբ. Ստեփանոս Նախավկայի եկեղեցին (Շահանդուխտի եկեղեցին), 3. գավիթը, 4. հյուսիսային սյունասրահը, 5. սբ. Կարապետ եկեղեցին, 6. արևելյան սյունասրահը, 7. հուշասյունը, 8. համբարանոցը, գործատունը, 9. կոմունալ շինություններ, 10. պարսպապատ, 11. գերեզմանոցը, 12. գլխավոր մուտքը։

Մինչև վանքային համալիրի հիմնադրումը (1000 թ.), այստեղ, թերևս IV դարից սկսած, գործել է Գրիգոր Լուսավորչի եկեղեցին[11] [գծ. 2 (1)]։ Ըստ Ստ. Օրբելյանի տեղեկությունների, Որոտնավանքը հիմնադրել է Սմբատ գահերեց իշխանի կինը՝ Շահանդուխտ թագուհին, որը ամուսնու մահից հետո, 1000 թ. Սմբատի կտակի համաձայն կառուցում է սբ. Ստեփանոսի Նախա-

11 Ստ. Օրբելեան, նշվ. աշխ., էջ 301։

վկայի եկեղեցի[12] [գծ. 2 (2)]։ Եկեղեցին կառուցելուց հետո Շահանդուխտ թագուհին ձեռնամուխ է լինում կառուցելու «...և տուն աղօթից կրաշաղախ վիմօք և ի դրան եկեղեցւոյն, և համբարանոցս և գործատունս և շուրջ պարսպէ դվանք»[13] [գծ. 2 (3, 8, 10)]։ Այնուհետև Շահանդուխտի մահից հետո նրա որդի Սևադան սկսում է համալիրի շինարարական III փուլը՝ 1006 թ. կառուցելով սբ. Կարապետ եկեղեցին և նրա արևմտյան կողմի սյունասրահը[14] [գծ. 2 (5, 6)]։ Պատմական այս տեղեկությունները հետաքրքրական են այնքանով, որ Շահանդուխտ թագուհին վանքային հաստատություն հիմնելու համար ընտրում է հնուց գոյություն ունեցող սրբավայրը, որը միաժամանակ, տեղանքի առանձնահատկություններից ելնելով, հնարավորություն էր տալիս անառիկ դարձնել վանքը, պարսպապատելով այն հիմնականում միայն արևելքից և արևմուտքից։ Որոտնավանքից 3 կմ հարավ-արևելք Որոտնաբերդն է։ Բերդի հարավային մասում, Որոտան գետի վրա, 1856 թ. կառուցվել է Մելիք Թանգու կամուրջը։ Որոտն բերդը (Որոտնաբերդ, Որոտան) հայտնի է եղել դեռևս IV դ. որպես Հայաստանի նշանավոր և անառիկ ամրոցներից մեկը։ Ստ. Օրբելյանը Սյունյաց թագավորության տարածքում նշում է 43 բերդ, որոնցից առանձնացնում է 12 առավել նշանավորները՝ Որոտն (Ծղուկք գավառում), Բղեն և Կկոց քար (Բաղքում), Բազարերդ, Բաղակու քար, Գեղի, Շլորուտն և Կապան (Զորքում), Գրհամ (Կովսականում), Կաքավարերդ, Կարճևան և Մեղրի (Արևիքում)[15]։ Բերդի մասին առաջին պատմական տեղեկությունները վերաբերում են V դարին. «Յայնմ ժամանակի դարձեալ յարձակեցան ի վերայ բերդից եւ աւանաց, զոր ունէին Պարսիքն ի տեղիս. յամրոցս աշխարհին, տապալէին զընակութիւնս նոցա... եւ առնուին զանմատոյց ամուրսն՝ զԳառնի քաղաքն, զԱնին, զԱրտագեսն, զԿապայտն, զՈրոտն...»[16]։ Այս դեպքերը տեղի են ունենում 451 թ.։ Ստ. Օրբելյանը տեղեկացնում է, որ 1075—1092 թթ. Որոտն բերդն ու շրջակա ավանները գտնվել են Սենեքերիմ Ա-ի իշխանության տակ։ Մինչև 1104 թ. բերդն ու Ուռուտ գյուղը (այժմ՝ Որոտան) գտնվել են սելջուկյան Թուրքերի տիրապետության տակ[17]։ 1103 թ. Թուրքերը Զորթմանի դյուխավորությամբ ներխուժում են Բաղաց խաղավորություն[18] ու ավերում երկիրը։ 1104—1105 թթ. նրանք գրավում են թագավորության երկու խոշոր բերդերը՝ Որոտնը և Բղենը. «...Դարձեալ յետ մի ամի, ի 553 (1104 թ.) թուականին առաւ Որոտն»[19]։ Զաքարև և Իվանե եղբայրները 1211—1219 թթ. Որոտն բերդն ու մերձակա աարածքները ազատագրում են Թուրքական լծից. «...Առին ի 660 թուին (1211 թ.—Ա. Զ.) զՍիւնիս, զՈրոտն, զԲղեն, զԲարկուշատ»[20]։ 1219 թ. Աթաբեկ Իվանեն Լիպարիտ Օրբելյանի առաջնորդությամբ գրավում է Որոտն բերդը[21], որից հետո թաթարների Բաչու խանի հետ վարած բանակցությունների շնորհիվ բերդն ու հարակից ավաններն ընկնում են Լիպարիտի տիրապետության տակ։ Բերդն Օրբելյանների տիրապետության տակ մնում է մինչև XV դ.։ Սյունյաց Օրբելյանների տիրապետությունը ուժեղանում է հատկապես 1250-ական թվականներին, երբ իշխանությունն անցնում է Սմբատին։ Վերջինս, գնալով Մանգու խանի մոտ, կարողանում է ստանալ ինքնուրույն թումանի իշխանություն։ Սմբատը, Սյունիք վերադառնալով, Բաչուից ռազմական օգնություն է ստանում և գրավում Որոտն բերդը։ Հետագայում Սմբատն այնքան է ուժեղանում, որ արքայական տիտղոս և ինքնավարություն է ձեռք բերում[22]։ 1386 թ. բերդը գրավում են Թուրքերը. «Ի Պլէ (1386 թ.) ամին Թուրքն էառ զբերդն Որոտնայ եւ մեծ վարդապետն Կախին Որոտնեցի գնաց

---

12 Նույն տեղում, էջ 302։ Ըստ Բ. Հ. Հարությունյանի, սբ. Ստեփանոս Նախավկայի եկեղեցու կառուցումը սկսել է Սմբատ թագավորը, իսկ նրա կինը՝ Շահանդուխտը, այն ավարտել է 1000 թ. (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 3, Երևան, 1976, էջ 123)։

13 Ստ. Օրբելեան, նշվ. աշխ., էջ 302։

14 Նույն տեղում։

15 Նույն տեղում, էջ 334—335։

16 Եղիշէ, Պատմութիւն Վարդանանց, Վենետիկ, 1950, էջ 131։ Տե՛ս նաև «Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցւոյ պատմութիւն տիեզերական», ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին, Մոսկվա, 1861, էջ 185, «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 140—141, Եղիշե. Վարդանա Պատմությունը, Երևան, 1946, էջ 150։

17 Հ. Միքայէլ Հովհաննէսեան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 408։

18 Սյունիքի թագավորությունը կոչվել է նաև Բաղաց կամ Կապանի թագավորություն։

19 Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 246։

20 Ստ. Օրբելեան, նշվ. աշխ., էջ 333—335։

21 Նույն տեղում, էջ 397։

22 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 3, էջ 623։

փախստական ի Ծարայ»23։ Այս դեպքերին ականատես Հովհան Որոտնեցին հետագայում գրում է. «...մեղքն իմ ծովացեալ եհան զգունդս անէրինաց ի վերայ քրիստոնէից, մանաւանդ ի վերայ տանն Բուրդելի, որ եկին եւ առին զբերդն Որոտան եւ հայրենազուրկ արարին զՊարոն Սմբատն, որդի Նանիկին»24։ Այս մասին է պատմում նաև Հակոբ գրիչը 1386 թ. գրած հիշատակարաններում25։ 1407 թ. Սմբատ իշխանից բերդը խլել է Կարկ-Ցուսուֆ Թեմուրյան բռնակալը։ XIII դ. Որոտն բերդը գտնվում էր Դավիթ անունով իշխանի տիրապետության տակ, որը հալածում էր հայերին։ Գուգարքի իշխան Հովհաննեսը զորքով հարձակվում է Որոտն բերդի վրա, նպատակ ունենալով գերել Դավթին, սակայն, վերջինս նախօրոք տեղեկանալով, կարողանում է դիմագրել։ 1724 թ. արդեն Ղափան հասած Դավիթ Բեկը պաշարում է Որոտն բերդը։ Բերդի պաշարումը հեշտացնում է հորդառատ անձրևներից փուլ եկած պարսպապատի բացվածքը, որտեղից և ներխուժում են Դավիթ Բեկի զորքերս ու թուրքերի հետ սրամարտում հաղթանակի հասնում26։

Որոտնաբերդը հանգամանորեն նկարագրել է Մ. Փափազյանը, և քանի որ նրա այցելության ժամանակ բերդն ավելի լավ էր պահպանված, ուստի բերում ենք այդ նկարագրությունից մի հատված. «Սույն կամուրջի (Մելիք Թանգի—Ա. Ջ.) և գետի ափից սկսած մի քարաժայռ է բարձրանում, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի անմատչելի բերդ, որ տեղավորված է ուղտանման մի սարի վերա։ Այս բերդին ոմանք Որոտնա բերդ են անվանում և ծերունիներից շատերը ավանդությամբ պատմում են, որ վերջին ժամանակի պատմական Դավիթ բեդը շատ անգամ այս տեղ է ապաստանել յուր զինակիցներով, ...Բերդը իր երեք—արևել. հյուսիս. և արևմտյան (պետք է լինի՝ հարավային—Ա. Ջ.) կողմերից քարաժայռոտ լինելով անմատչելի է եղած. բերդը կարելի է մտնել միայն հարավային (արևմտյան—Ա. Ջ.) կողմից, որ գետի եզերքից սկսած մի ճանապարհ է ունեցել վաղ ժամանակ, սույն ճանապարհով մի վերոտաչափ27 բարձրանալիս, ողորը տեսնում է բաղմաթիվ փլատակ և ավեր սենյակների ու շինությունների հետքեր, որոնք միմյանց կից լինելով՝ բերդի այլկողմն էլ սնվտանգ են դարձնում թշնամուց։ Վերոհիշյալ փլատակ շինությունները հաստատված են հարդ ապարակ տեղվո վրա, արևելյան կողմը միջնաբերդն է հաստատված, շուրջը յուր բնական դիրքի հարմարությունից բոլորովին անմատչելի է դարձել, և ունի ավելի քան 20 սաժեն28 բարձրություն նույն տափարակ տեղից։

Ինչպես ասացինք, այս միջնաբերդն էլ ամբողջովին քարաժայռ է, և եթե մասնավոր բաց տեղեր կան, սորանք էլ ամուր պարսպապատված են, թողնելով միայն մի փոքրիկ նեղ անցք միջնաբերդը բարձրանալու»29։

Որոտն բերդը տեղադրված է Լորաձորի գետաբերանի և Վաղուդի գյուղի միջև գտնվող հրաբխային ժայռաղանգվածի վրա։ Դահավեժ, բնական ժայռապարիսպները բերդի երեք կողմերից իջնում են դեպի Որոտանի կիրճը։ Բերդի տարածքը կազմող հարթակը հավասարասրուն եռանկյան տեսք ունի, որի հյուսիսային անկյունում վեր է բարձրանում մի խոշոր ժայռաղանգված, հարավում, մոտ 50 մ բարձրության վրա միջնաբերդն է, իսկ հարթակի մյուս կողմերը զառիվայր են, բացի արևմտյան հատվածից (գծ. 3)։ Այս մասի ստորոտը զուրկ է ժայռերից և, կորագծով իջնելով, կազմում է մի նեղ, երկար պարանոց, որը միանում է կիրճի հակառակ կողմում առաջացած բնական սարոստին։ Բերդի ընդհանուր տարածքի այս հատվածը, ուր մինչ օրս նկատվում են շինությունների ու պարսպապատերի հետքեր, շատ ավելի մեծ է, քան բերդի բուն եռանկյունի հարթակը։ Պարանոցի հատվածում ևս նկատվում են ավերակ շինությունների հետքեր և երկարությամբ ձգվող ոլորապտույտ պարսպապատի ստորին հատվածի մնացորդներ։ Ըստ երևույթին, բերդի հերթական վերակառուցման ժամանակ երկու բարձունքները կապող նեղ պարանոցը փակելու անհրաժեշտություն է առաջացել, և լրացուցիչ պատնեշ է ստեղծվել ոչ միայն բերդին մոտենալու միակ ճանապարհին, այլև փակվել է Որոտան գյուղին մոտենալու հարմար ուղղությունը։

---

23 Սամուէլ Անեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1893, էջ 170։

24 Հ. Միքայէլ Հովհաննէսեան, նշվ. աշխ., էջ 409։

25 «ԺԴ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 560։

26 Հ. Միքայէլ Հովհաննէսեան, նշվ. աշխ., էջ 411։

27 Հին ռուսական չափման միավոր՝ 1067 մ։

28 Հին ռուսական չափման միավոր՝ 2, 134 մ։

29 Մ. Փափազյան, նշվ. աշխ., էջ 335։

Որոտն բերդի արևմտյան և արևելյան հատվածներում պահպանվել են պարսպապատեր՝ կառուցված բազալտե, միջին չափերի կոպտատաշ քարերից, կրաշաղախի միջնաշերտով։ Քարերը շարված են ըստ հորիզոնական շվերի, ուղղահայաց և թեքադիր։ Արևմտյան պարսպապատը երկշերտ է՝ կազմված առաջնապարսպից [գծ. 3 (1)] և ներքնապարսպից [գծ. 3 (2)]։ Առաջնապարիսպը սկիզբ է առնում հյուսիսային ժայռաղանգվածի [գծ. 3 (3)] ստորոտից և, իր մեջ



Գծ. 3. Որոտնաբերդ. սխեմատիկ հատակագիծ։

առնելով մի խոշոր ժայռաբեկոր, շարունակվում է մինչև բերդի գլխավոր մուտքը [գծ. 3 (5)]։ Ներքնապարիսպը նույնպես սկիզբ է առնում հյուսիսային ժայռաղանգվածից, որի միայն ստորին հատվածի մի մասն է պահպանվել, այնուհետև, ընդհատվելով, կորագծեր կազմելով, շարունակվում է անմիջապես մուտքի մոտից և փակում է արևմտյան մասի ողջ երկարությունը մինչև հարավային կողմի զառիթափ հատվածը։ Բերդի գլխավոր մուտքը ավերակ է, սակայն հնարավոր է վերականգնել սկզբնական տեսքը, քանի որ առաջնապարիսպը ավարտվում է ժայռից ոչ հեռու։ Սրա ետևում պարսպապատի երկրորդ գոտին է՝ ներքնապարիսպը, որը ևս ունի ավերակ դարպաս [գծ. 3 (6)]։ Այս երկու դարպասները միևնույն առանցքի վրա չեն գտնվում, որի պատճառով ստեղծվում է կրկնակի դարպասներով, անցախուցով մուտք։ Մուտքերի լուծման այսպիսի սկզբունքը հաճախ է կիրառվել հայկական բերդաշինության մեջ, սակայն դրա հատակագծային լուծումը բխում է տեղանքի առանձնահատկություններից, ուստի տարբեր տեղերում այն լուծվել է յուրովի, ռազմաստրատեգիական ընդունված սկզբունքներին համապատասխան։

Առաջնապարսպի միջին հատվածում, դրա ամբողջ բարձրությամբ կա մի ուղղանկյուն խորշ (4,14×0,70 մ), որն առաջացել է պարիսպը տեղանքի հետ հարմարեցնելու հետևանքով։ Պարբսպապատերի այս խորշերը, որոնց հանդիպում ենք հնագույն շրջանում, կրկնվում են ողջ երկարությամբ։ Պարսպի միջին բարձրությունը 5,5 մ է, նկատվում են վերանորոգումների հետքեր։ Առաջնապարսպի միջնամասում, ներսի կողմից պահպանվել ևս ուղղանկյուն շինության (6,40×5,40 մ) պատերի ստորին հատվածները [գծ. 3 (7)]։ Կառույցի պատը նույնպես եռաշերտ է՝ կառուցված բազալտե միջին չափերի կոպտատաշ քարերից։ Կառույցի արևմտյան պատի մոտ կեսը ագուցված է պարսպապատի մեջ, որը ենթադրել է տալիս, որ այն կառուցվել է ավելի ուշ։ Հնարավոր է նաև, որ շինությունը օգտագործվել է որպես զինանոց։

Բերդի եռանկյունաձև հարթակի հարավային կողմը, ուր միջնաբերդն է, ավելի բարձր է [գծ. 3 (8)]։ Այստեղ խմբավորված են առանց շաղախի, անկանոն քարերից կառուցված բազմաթիվ ուղղանկյուն սենյակներ։ Վերջիններիս բուն նշանակությունը դժվար է բացահայտել, քանի որ դրանք լցված են փլատակներով ու քարակույտերով։ Ամենայն հավանականությամբ,

այս շինություններն ունեցել են կենցաղային նշանակություն և կառուցվել ու լրացվել են երկար ժամանակահատվածում։

Պարսպի մեկ այլ գոտի կառուցվել է արևելյան կողմում։ Այն նույնպես սկիզբ է առնում հյուսիսային ժայռաձգվածի ստորոտից, անմիջապես հպվելով նրան։ Պարսպապատն ունի երկու աշտարակ՝ մեկը շրջանաձև [գծ. 3 (9)], մյուսը՝ կիսաշրջանաձև [գծ. 3 (10)]։ Երկուսն էլ սնամեջ են՝ կառուցված բազալտե կոպտատաշ միջին չափերի քարերից, կրաշաղախի միջնաշերտով։ Այս հատվածում պատի միջին բարձրությունը 3 մ է, հաստությունը՝ 0, 80 մ։ Սնամեջ, շրջանաձև աշտարակի պատի ստորին մասում պահպանվել է կիր-ավազային սվաղի երկշերտ ծածկույթ, յուրաքանչյուր շերտի հաստությունը՝ 0, 02 մ։ Ամենայն հավանականությամբ, այս աշտարակները ծառայել են որպես դիտակետ և պահակակետ, քանի որ դրանք տեղադրված են զառիվայր, բարձրադիր ժայռերի վրա, որտեղից երևում է ամբողջ գետահովիտը։ Շրջանաձև աշտարակին և հյուսիսային ժայռաձգվածին հպված, պարսպապատին ուղղահայաց պատ։ միջև եղած տարածությունը անպարիսպ է։ Այս հատվածը նստում է բնական ժայռի վրա և ծածկված է փլատակներով։ Այս հատվածում է եղել բերդի երկրորդ մուտքը [գծ. 3 (11)]։ Չնայած այն գահավեժ իջնում է դեպի Որոտան գետը, սակայն անհրաժեշտության դեպքում հնարավոր էր օգտագործել նաև որպես կապի միջոց։ Պատմական Որոտն (Ուռուտ) գյուղի ավերակները մինչև օրս նկատվում են բերդի արևելյան պարսպապատի տակ։ Այս մուտքից են օգտվել Որոտն գյուղի բնակիչները թշնամու հարձակումներից բերդը պաշտպանելու ժամանակ, քանի որ գլխավոր մուտքը գտնվում էր բերդի հակառակ կողմում, իսկ դրա ստորոտը ամբողջ հարավային կողմով շրջանցելը ժամանակի մեծ կորուստ կլիներ[30]։

Արևելյան պարսպապատի հարավ-արևելյան հատվածում պահպանվել են ուղղանկյուն, միաթաղ կառույցի պատերը (2,5 մ միջին բարձրությամբ)՝ շարված բազալտե կոպտատաշ, միջին չափերի քարերից՝ կրաշաղախի միջնաշերտով։ Հնարավոր է, որ այս շինությունը օգտագործված լիներ որպես շրամբար [գծ. 3 (12)]։ Ի դեպ, Ե. Լալայանը իր աշխատություններից մեկում հիշատակում է, որ բերդի բաց կողմում (իսկ այս շինությունը տեղադրված է արևելյան պարսպից հետո) փորված է եղել մի ստորերկրյա անցք՝ շուր բերելու համար[31]։ Ջրամբարի հարավային կողմում կան պատին հպված մի քանի փոքր, ուղղանկյուն շինությունների հետքեր [գծ. 3 (13)], որոնց պատերը շարված են բազալտե կոպտատաշ քարերից, առանց շաղախի։ Բերդի հարավային կողմն անպարիսպ է, քանի որ բնական ժայռապարիսպներն արդեն անառիկ են դարձնում այս հատվածը։

Որոտն բերդի տեղադրման համար օգտագործվել է Որոտանի գետահովտի տվյալ տարածքում գոյություն ունեցող այն բնական ժայռոտ բարձունքը, որտեղից կարելի էր հսկել մեծ տարածություններ և հետևել թշնամու տեղաշարժերին։ Բերդի նշանակությունը ավելի կարևոր է դարձնում այն հանգամանքը, որ հովտով էր անցնում երկրորդական նշանակություն ունեցող առևտրական մի ճանապարհ, որը սկիզբ էր առնում Նախճավանից, մտնում Ծղուկք գավառի տարածքը և, անցնելով մի շարք բերդերի հսկողության տեսադաշտով (Շաղատ, Դաստակերտ, Սյունի, Աղխիտու, Որոտն, Խոտուք, Ցուր)[32], Բաղք, Մեղրի գավառներով իջնում էր մինչև Կարճևան, ուր այն միանում էր Ջուլֆա—Փայտակարան միջազգային առևտրական ճանապարհին։

Այսպիսով, X դ. սկսած Սյունիքում վանքային կարևոր հաստատությունները հիմնադրվում են կենտրոնական բերդերի հսկողության տեսադաշտում, դրանով իսկ ապահովելով իրենց անվտանգությունը։ Դրա հետ կապված հանդես է գալիս պաշտպանական մի նոր համակարգ, որը, երկկենտրոն լինելուց բացի, կազմել է նաև երկրի ռազմաստրատեգիական ընդարձակ համակարգի օղակներից մեկը և հանդիսացել է քաղաքաշինական կարևոր միավոր։ IV դ. սկզբնավորված քաղաքաշինական միավորները՝ Որոտնաբերդը որպես Շաղատ մայրաքաղաքի պաշտպանական համակարգի միավոր և Որոտնավանքի Գրիգոր Լուսավորչի եկեղեցին որպես սրբավայր՝ վանքային հաստատության հիմնադրման համար, հետագայում դարձել են այն ավանդական նախադրյալները, որոնց հիման վրա X դ. կազմավորվել է բոլորովին նոր՝ երկկենտրոն համակարգ։

---

30 Այս հատվածում էր գտնվում Որոտան գետը տանող գետնուղու գլխամասը, որն այժմ ծածկված է փլատակներով։

31 Տե՛ս Ե. Լալայան, Զանգեզուրի գավառ, հ. Ա, Թիֆլիս, 1898, էջ 54։

32 Սրանք միայն Ծղուկք գավառով անցնող ճանապարհահատվածի երկայնքով տեղադրված բերդերն են։

Այս երեույթը արժանի է ուշադրության, քանի որ հետագայում լայն տարածում է ստանում Սյունիքում և իր արտահայտությունն է գտնում երկկենտրոն պաշտպանական այլ համակարգերում։ Այստեղ հարկ է նշել, որ այս տիպի համակարգերը չունեն պաշտպանական և պաշտամունքային կառույցների միասկզբունք լուծում և, եթե Որոտնաբերդն ու Որոտնավանքը կառուցվել են Որոտան գետի հովտով տեղադրված բարձրադիր, ժայռալանջ սարառուտների վրա, ուր գետը շրջապտույտ է կատարում, ապա երկկենտրոն պաշտպանական այլ համակարգերում՝ Սմբատաբերդ-Ծաղաց քար, Բաղարերդ-Վահանավանք և այլն, պաշտպանական և պաշտամունքային կառույցները դիրքորոշված են գետահովտի երկու կողմերում, իրար դիմաց կամ իրարից շեղված։ Կարևորը ոչ միայն երկու կենտրոնների դիրքորոշումն է իրար նկատմամբ (մեր օրինակներում հեռավորությունը 3—5 կմ է), այլ այն, որ պաշտամունքային կառույցները տեղադրված են խոշոր բերդերի պաշտպանության տակ, դրանով իսկ ապահով դարձնելով իրենց կալվածքներն ու վանքապատկան տարածքները։

ОБОРОНИТЕЛЬНАЯ СИСТЕМА ВОРОТНАБЕРД-ВОРОТНАВАНК

АРА ЗАРЯН

Резюме

В X в. в Сюнике, наряду с некоторыми оборонительными системами, сформировалась двуцентричная оборонительная система, которая в дальнейшем нашла широкое применение в реализации обширной военно-стратегической программы страны. В отличие от одноцентричных систем, которые состояли из одного главного укрепленного центра и распространенных вокруг него имевших оборонительное значение составных частей, двуцентричные системы формировались из главного элемента—крепости и вторичного—монастыря. Крупные монастырские комплексы располагались в зоне охранного обзора центральных крепостей, и для их размещения применялись те же военно-стратегические принципы, которые были положены в основу размещения и строительства крепостей и оборонительных сооружений.

Из двуцентричных оборонительных систем Сюника особый интерес представляет система Воротнаберд-Воротнаванк. Она находилась на высоких утесах ущелья Лорадзор по реке Воротан в регионе Цлугк. Крепость и монастырь находятся на расстоянии 3—4 км друг от друга. С IV в. Воротнаберд составлял часть оборонительной системы столицы Шагат, образуя с некоторыми крупными крепостями оборонительную дугу, охватывающую Шагат с востока, юга и запада и создающую мощный щит против сасанидской инквизиции.